ԿԱՐԾԻՔ

««Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

««Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

Նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ոստիկանության կողմից մարդու իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման և բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

Վերոգրյալ փոփոխության մեջ վիճահարույց է այն, որ սահմանվում են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը, անկախ դրանց բնույթից: Սակայն ոչ բոլոր հիմնական իրավունքներն ու ազատություններն են ենթակա նախատեսված հիմքերով սահմանափակման: Այսպես, ՀՀ սահմանադրության 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ավելին, ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը թողնել անփոփոխ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

[1]Այսուհետ՝ Նախագիծ